ԲԱՐԵԳՈՐԾ

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱՋՄԱՋԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

BAREGORTS,ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՐՏ, 2015, ԹԻՎ 26- 27, БАРЕГОРЦ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՋՆԻՎ ՆՎԻՐՅԱԼԸ

Այսպես կենսախինդ էր նա ու հավատով լեցուն...

Երկրային իմաստավոր կյանքը դրժվար է տրվում մարդուն. ավելի ճիշտ՝ մարդն ինքն է բովանդակավորում իր երկրային կյանքն ուժամանակը: Այսպիսին էր մեզնից վերջերս հեռացած, մեր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի եռանդուն անդամներից մեկը՝

Վահագն Մահտեսի-Հակոբյանցը:

Ազնիվ հայորդին ուներ ի՛ր կենսագրությունը, օրինակելի հայ մարդու ի՛ր ըմբռնումն ու կենսակերպը, որն այսօր մեզ պարտավորեցնում է իր մասին խոսել միայն ներկայով: Քչերն են ապրում նրա պես ու դառնում սիրելի, հարազատ ու պայծառ հիշողություն:

Նա ծնվել է1942 թ. սեպտեմբերի 28-ին Իրանի երբեմնի հայաշատ Թավրիզ քաղաքում՝ Ռուբեն և Թամար Մահտեսի-Հակոբյանցների ընտանիքում: Չորս զավակներից ավագն էր Վահագնը, ով ծննդավայրի դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն կրթության նպատակով մեկնեց Ավստրիա և ընդունվեց Գրաց քաղաքի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այնուհետև նա կրթությունը շարունակեց իր պաշտելի Հայաստանի մայր բուհում՝ Երևանի պետական համալսարանում: Առաջնորդի, կազմակերպիչ լինելու մեծ շնորհներով օժտված երիտասարդը Հայաստանում կազմակերպեց սփյուռքահայ ուսանողների առաջին խորհուրդը և ընտրվեց նրա նախագահ: Այդ խորհուրդն իր գործունեությամբ աշխուժություն, նոր շունչ ու ոգի հաղորդեց ժամանակի հայ երիտասարդությանը և մանավանդ սփյուռքահայ ուսանողներին: Բուհն ավարտեց 1972-ին և դարձավ միջազգայնագետ պրոֆ. Ջոն Կիրակոսյանի ասպիրանտը:

Սակայն ժամանակներն ու քաղաքական հանգամանքները, գաղափարական պարտադրանքները նպաստավոր չէին լիարժեք միջազգայնագետ դառնալու համար: Հենց այս պատճառով էլ նա շուտով տեղափոխվեց Գերմանիա և աշխատանքի ընդունվեց Արևմտյան Բեռլինի FU Ազատ համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում որպես գիտաշխատող:

Եվրոպական «խաղաղ» ու բարեկեցիկ կյանքը, սակայն, այդ անհանգիստ երիտասարդի համար չէր, որովհետև նա հազար թելերով կապված էր Արևելքին՝ Իրանին ու Հայաստանին:

Իրանական հեղափոխության առաջին իսկ օրերից Վահագն Մահտեսի-Հակոբյանցը տեղափոխվեց ծննդավայր և դժվարին պայմաններում իր առաքելությունը համարեց դեմոկրատական բարեփոխումներին մասնակցելը: Իր ընկերների հետ միասին այստեղ նա հիմնեց «Փյունիկ» շաբաթաթերթը: Նա իր շուրջը համախմբեց ժամանակի իրանահայ երիտասարդությանը և իր ժողովրդանվեր հայանպաստ գործունեությամբ նոր ընթացք հաղորդեց իրանահայ համայնքի կյանքին: Նա կարողացավ երիտասարդության մեջ զորեղացնել սերը հայրենիքի հանդեպ և կողմնորոշել նրանց դեպի մայր Հայաստան՝ այստեղ իրենց ուսումը շարունակելու:

Վահագն Մահտեսի Հակոբյանցի ջանքերով Հայաստանում կազմակերպվեցին իրանահայ ուսուցիչների առաջին հավաքն ու վերապատրաստման դասընթացները, երևույթ, որի նախաձեռնումն ու իրագործումը մեծ հանդգնություն էր խորհրդային ժամանակների աչալուրջ հսկողության պայմաններում:

1988 թ. աղետալի երկրաշարժի օրերին և Արցախյան շարժման ու թշնամու՝ մեզ պարտադրած պատերազմի ողջ ընթացքում Վահագն Մահտեսի Հակոբյանցը տուժածներին ու կարիքավորներին անձամբ օգնություն հասցնողներից մեկն էր. սկզբում իր ընկերների հետ միասին օգնում էր ազատամարտիկներին, այնուհետև՝ Արցախի ազատագրության բանակին: Իսկ ճիշտ ժամանակին հասցրած նրա նյութական ու բարոյական օգնությունը քիչ չէր: Երբեք տատանումներ չունեցավ ու դժվարությունների առջև չընկրկեց. հավատում էր մեր հաղթանակին ու հավատացնում կասկածողներին, հնարավոր ամեն միջոց գործադրում էր բաղձալի նպատակին հասնելու համար:

1988 թ. ամռանն արդեն նրա նախաձեռնությամբ ստեղծվել էր Գերմանախոս երկրների Ղարաբաղ կոմիտեն, որն իր գործունեությամբ լուրջ ներդրում ունեցավ եվրոպական երկրներում արցախյան հիմնահարցի ճիշտ, արդարացի ու անկողմնակալ լուսաբանման ու տարածման գործում:

Հայաստանի անկախացումը և Արցախի ազատագրումը Վահագն Մահտեսի-Հակոբյանցի ոգևորության գագաթնակետն էին: Վերջապես, գոնե մասնակիորեն իրականանում էր նրա ու բոլորիս ազգային մեծ երազանքներից մեկը: Իրականանում էր դժվարությամբ, թանկ զոհերի գնով, բայց դա չէր ընկճում աներեր հայորդուն, ով բնակվում էր արտասահմանում, բայց ապրում էր Հայաստանում ու Հայաստանով:

«Ինձ համար Հայաստանի մութը Գերմանիայի լույսից թանկ է»,–հաճախ բարձրաձայնում էր նա և մեզ հետ միասին անտրտունջ կրում բոլոր նեղություններն այն դեպքում, երբ կարող էր հանգիստ վայելել եվրոպական բարեկեցությունը:

Միշտ Վահագն Մահտեսի Հակոբյանցի խոսքն ու գործը հաջորդում էին իրար, և նրանց միջև խզում չկար:Պարտաճանաչ այդ հայը սրբորեն կատարում էր իր խոստումները և այդպիսով հիմնավորում իր կրակոտ խոսքը՝ դրանով մեծացնելով իր անձի ու գործի հանդեպ շրջապատի մարդկանց հավատն ու սերը:

Ազատագրված հայրենիքի վերաշինությանը մասնակցելը նա համարում էր յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը: Զինադադարից անմիջապես հետո Բերձորում (Լաչին) նա ստեղծեց ավանդական գորգագործությունը շարունակող ու զարգացնող դպրոց, որի կայացման համար ներդրեց լուրջ միջոցներ և անձամբ էր հետևում այդ գործընթացին: Բերձորի առաջին դպրոցի շրջանավարտները դեռ երկար կըհիշեն այս բարեգործի ու անկեղծ հայրենասերի խիստ անհրաժեշտ նվիրատվությունները:

1990-ական թթ. մինչև իր կյանքի վերջին օրերը Վահագն Մահտեսի Հակոբյանցը մեծ եռանդով ու նվիրումով մասնակցում էր «Գերմանահայոց կենտրոնական խորհրդի» ու «Եվրոպայի հայկական համագումարի» աշխատանքներին, նրանց բուռն քննարկումներին, որոնք, ի վերջո, արդյունավետ եղան մեր արդար դատի համաշխարհայնացման իմաստով:Մեր ազգային նպատակների ու ձգտումների արդարացիության մեջ համոզված այդ հայորդու՝ Վահագն Մահտեսի Հակոբյանցի մտահղացմամբ ու անմիջական ջանքերով Եվրախորհրդում ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության վերաբերյա քննարկումների շնորհիվ էր, որ եվրահայությունն ստացավ ձայնի իրավունք:

Իր ազնվությամբ ու շիտակությամբ էր Վահագն Մահտեսի Հակոբյանցը դառնում հույսի ու հավատի հենարան: Իրանում ծնված, եվրոպաներում ապրած այդ ազգանվեր հայորդին մինչև վերջ եղավ Հայաստանի սիրահար, մնաց մեր ժողովրդի հիշողության մեջ որպես մեր հայրենիքի հզորացման ջատագով, մեր արդար ու սուրբ գործի ազնիվ նվիրյալ:

Նրա աճյունափոշին իր իսկ ցանկությամբ շաղ է տրվել իր պաշտելի Հայաստանի Գառնիի անդնդախոր կիրճերում, ինչպես նաև ազատագրված հայրենի գեղատեսիլ Արցախի՝ Բերձորի հողում: Քանի՜-քանի անգամներ է նա այստեղ և՛ առանձին, և՛ Երևանի ու Արցախի պետական համալսարանների ուսանողների հետ միասին մասնակցել ծառատունկի, իր ձեռքով տնկել արդեն բերքատու ընկուզենիներ: Այդ վայրում էլ դրվել է Վահագն Մահտեսի Հակոբյանցի հիշատակը հավերժացնող հուշաքարն ու հիմնվել նրա անվան պուրակը:Գողտրիկ մի անկյուն է դա, որ բոլոր հարազատներին ու ճանաչողներին, նաև պատահական անցորդներին ծառերի կանաչ խըշշոցով ու համեղ պտուղներով հավիտյանս հավիտենից հիշեցնելու է Հայաստանի ու հայության ազնիվ նվիրյալներից մեկի՝ Վահագն Մահտեսի Հակոբյանցի գեղեցիկ կյանքի պատմությունը:



Այսպես ժպտալով էլ նա հրաժեշտ տվեց մեզ ու իր երկրային կյանքին

Հավե՜րժ փառք մեր հավատարիմ ու սիրելի ընկերոջ, ազնիվ հայորդու լուսավոր և անթառամ հիշատակին: Այդպիսի զավակներով են հպարտ հայությունն ու Հայաստանը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ – 856 Ա
քաղ. Երևան
ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ՝ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թ. թվականի մայիսի 31-ի N 3/3,8-2/8446-14 և N ՎՄ /5 – 16699-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մայիսի 31- ի N ՀԲ ԱՆՄ-4/4173-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մայիսի 31-ի N 03/07-16073-14 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 2-ի N 01/06.1/1821-14 եզրակացությունները՝ ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (չոր ապուր, 20 տեղ, 19, 201 կգ ընդհանուր քաշով, 111, 360 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ.փոխադրման ծախսը կազմում է 9, 103 դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ՝ (կլոր կնիք, ստորագրություն) Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 20 պալետ. 19, 201 կգ բրուտտո քաշով , 111, 360 ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը 9,103 դոլար արժողությամբ բեռը

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԸ

h/h	Ապրանքի անվանումը	տեղ	քաշ բրուտտո կգ	Արժեքը դոլարով	ԼՂՀ Քաշաթաղի շրջ. սոցապ վարչություն	ԼՂՀ «Արփեն» մայր և նորածին կենտ. ԲԿ	ՀՀ սոց. նախար.	Գորիսի թիվ 5(ՆՈՒՀ ՀՈԱԿ (104 երեխա)	ՀՀ Արմավ. մարզ,Շենի կ, 255 ը/նիք	ԵՊՀ արհմ. 27 ընտանիք զոհված ա/մարտ.
1	Համակց. սնունդ (չոր ապուր)	20 պալետ	19, 201	$ 111, 360 ճան. ծախս՝ $9, 103	4201 կգ $ 26,356	11 600 կգ $ 72 778	1 500 կգ $ 9410	500 կգ $ 3137	1000 կգ $ 6274	400 կգ $ 2508

Կլոր կնիք, ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2014 թվականի N Մ – 536 Ա
քաղ. Երևան
ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ՝ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թ. թվականի օգոստոսի 20 - ի N 07/80 -2/ 12427 - 14 և օգոստոսի 19-ի N 06 / 5 – 1/ 12356 - 14 Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի օգոստոսի 21- ի N ՖԲ ԱՆՄ-4 / 6697-14 եզրակացությունները,

որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (չոր ապուր, 20 տեղ, 15, 429 կգ ընդհանուր քաշով, 111, 360 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ. փոխադրման ծախսերը կազմում է 9, 500 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն)ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ՝ (կլոր կնիք, ստորագրություն) Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ԱՄՆ-ի «Հայկական միացյալ հիմնադրամի» կողմից ուղարկված 20 տեղ, 15422 կգ բրուտտո քաշով, 111, 360 ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը 9, 500 ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԸ

Ապրանքի անվանում	Տեղ	Քաշ բրուտ-տտո կգ	Արժեքը $-ով	Խարբերդի հատուկ դպրոց ՊՕԱԿ	Սպիտակի երիտ. և կանանց կենտրոն ՀԿ	Փրկության Հեթեկ ԲՀԿ	«ՍՕՍ» մանկակ՝ գյուղեր ՀԲԿ	Focus on children-ի ՀՀ մ / ճ	ՀՀ սոց. նախար.	ԼՂՀ Քաշաթաղ. սոցապ վարչ.	ԼՂՀ «Արփեն» մայր և նորածին կենտր.ԲԿ
Հմկց. սննդ չոր ապուր Vitameal	20	15 422	$ 111, 360 ճանծախս՝ $ 9,500	բրտ/կգ 555, 192 $ 4008, 96	բրտ/ կգ 2251, 612 $16258, 56	բրտ/կգ 1125,805 $ 812928	բրտ/ կգ 1912, 328 $13 808, 84	բրտ/կգ 123,376 $ 890,88	բրտ/ կգ 555,192 $ 4008,96	բրտ/ կգ 2698, 85 $19488	բրտ/ կգ 4518, 885 $ 328,28

Կլոր կնիք, ստորագրություն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ
ԼՂՀ, ք. Շուշի, Ն. Դումանի փ., շենք 1;Հեռ.՝731011, 731038; էլ.փոստ՝shushi@govnkr.am

24.01.2014
N 2/14

Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի
բազմազավակ ընտանիքների հիմնադրամին

Շուշիի շրջանի վարչակազմն իր խորին երախտագիտությունն է հայտնում Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար: Տրամադրված օգնությունը բաշխվել է ըստ համայնքների.

Չոր սնունդ (1 տուփ-2.385 կգ քաշով)

- Շուշիի համայնք 20 արկղ-120 տուփ
- Շուշիի “Բարեկարգում”, ՓԲԸ 22 արկղ-132 տուփ
- Շուշիի ԱԱՄ 30 արկղ-180 տուփ
- Լիսագորի համայնք 10 արկղ-60 տուփ
- Քարին տակի համայնք 40 արկղ-240 տուփ

Ընդամենը՝ 152 արկղ-612 տուփ

Հագուստ

- Շուշիի “Բարեկարգում”, ՓԲԸ 3 արկղ (փակ վիճակում)
- Լիսագորի համայնք 1 արկղ
- Քարին տակի համայնք արկղ
- Հին Շենի համայնք 1 արկղ
- Մեծ Շենի համայնք 1 արկղ
- Շուշիի ԱԱՄ 3 արկղ

Ընդամենը՝ 10 արկղ

Ի տեղի վարչակազմի ղեկավարի՝ (ստորագրություն) Վ. Ս. Կասյան

Կլոր կնիք

Կատ.՝ Գ. Հովհաննիսյան, հեռ.՝ 73 - 16 - 55

ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	ամսաթիվ	անուն, ազգանուն	նպատակը	գումարը դրամով	արտարժույթով
1	15.08.14	Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ	Տոմսերի իրացման դիմաց	39950	
2	22.08.14	Գառնի ինվեստ ՈՒՎԿ ՓԲԸ ՎՏԲ. Հայաստան բանկ ՓԲԸ	Վահագն Մահտեսի Հակոբյանցի պուրակի հիմնադրման համար՝ համաձայն Զոյա Հակոբ-յանի դիմումի առ 20.08.2014	2041100	$500
3	27.08.14	Գրիգորյան Մարատ Արիսի	Ծառերի ծրագիր	80000	
4	27.08.14	Գաբրիելյան Դերենիկ Աբրահամի	Ծառերի ծրագիր	10000	
5	28.08.14	ԳուրգենՄելիքյան	Ծառերի ծրագիր՝ մեր սիրելի էմմա Զոլյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000	
6	01.09.14	Շահե Աճեմյան բարեգործ. հիմնադրամ	Օգնություն	1083760	20000euro
7	03.09.14	Խաչատրյան Արտուշ	Փախստականների գումարի վերադարձ	150000	
8	08.09.14	Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի Melkonyan Ruben	Օգնություն	80000	
9	09.09 14	Գուրգեն Մելիքյան	Tree project in memory of Loghin Garikian	20000	
10	16. 09.14	Hakubians GBR, Mars-La-Tour str.21, 26121 Oldenburg	Spende – G. Melikyan Faundation Assistance tu Cau program	1045365,8	1977,5euro
11	17.09. 14	Գուրգեն Մելիքյան	Ծառերի ծրագիր՝ Սաֆրազբեկյան Գևորգ Սադաթի - 3300, Սաֆրազբեկյան Արտո Սադաթի- 3300, Սաֆրազբեկյան Սաթենիկ- 3400	10000	
12	17.09. 14	Գուրգեն Մելիքյան	Ծառերի ծրագիր ի փոխան ծաղկեպսակի Kevork Tchobanian (18.07.2013)	20000	
14	17.09.14	Չանչուրյան էրիկ	ԽԵԱ ծրագիր	244200	$5000
15	19.09.14	Տեր-Պողոսյան Սուրեն	ԽԵԱ ծրագիր	285166	$700
16	19.09.14	Տեր-Պողոսյան Սուրեն	Ուսման ծրագիր	122214	$300
17	22.09.14	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Անժելա Ավագյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի (10.08.2014)	20000	
18	23.09.14	Մելիքյան Գուրգեն	Օգնություն՝ Նալբանդյան Հովսեփ և Քարոլին (02.03.2014.)	406,98	$100
19	23.09.14	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ՝ Պետրոսյան Կամո (02.03.2014.)	610,47	$150
20	26.09.14	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր՝ Լեռնիկ Մարտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի (05.08.2014)	20000	
21	27.09.14	Մարգարյան Կարինե	Նկարների ծրագիր	203500	$500
22	27.09.14	Հայրապետյան էլեոնորա	Նկարների ծրագիր	203500	$500
23	27.09.14	Արցախի ազգային վիճակախաղ ՓԲԸ	Վաճառված տոմսերի դիմաց	40000	
24	27.09.14	Բորոյան Ռաֆիկ	Ծառերի ծրագիր՝ Վահագն Մահտեսի Հակոբյանի պուրակ	204020	$500
25	27.09.14	Նաջարյան Քերոլան և Ջորջ	Carolann and George Najarian – for “Arpen” center	1428148	$3500
26	27.09.14	Գույումջյան Կիրակոս	Նվիրատվություն ՝ Ուռեկանի դպրոցի անձնակազմին և դպրոցի ուսուցիչներին	1224120	$3000
27	30.09.14	Մարաշլյան Գևորգ	Ծառերի ծրագիր՝ Լեռնիկ Մարտիրոսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	198000	
28	02.10.14	Ալաջաջյան Թերեզա	«Ստեփան Ալաջաջյան» կրթաթոշակ	407000	$1000
29	03.10.14	Գյուլեջյան Հակոբ	Ծառերի ծրագիր	81500	
30	03.10.14	Գալուստյան Հրանտ	Գրքերի ծրագիր	5000	
31	03.10.14	Զարգարյան Վիգեն	Ծառերի ծրագիր Վահագն Մահտեսի Հա-կոբյանցի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի	20000	
32	07.10.14	Իսրայելյան Արթուր	Գրքերի ծրագիր	30000	
33	23.10.14	Խաչատրյան Արտուշ	Փոխատվական գումարի վերադարձ	159999	
34	28.10.14	Իսրայելյան Արթուր	Գրքերի ծրագիր	50000	
35	03.11.14	Ղազարյան Գեորգի	Փոխատվական գումարի վերադարձ	50000	

36	03.11.14	Արզոյան Հրաչ	Օգնություն – Hrach Arzoyan	41000	$100
37	03.11.14	Արզումանյան Թագուհի	Օգնություն – Lark's Board members	164000	$400
38	03.11.14	Աշասյան Էմմա և Համո	Օգնություն – Hamo & Emma Ashasyan	82000	$200
39	03.11.14	Հարությունյան Ռոզմարի	Օգնություն – Atelier de Pais	41000	$100
40	03.11.14	Ավագյան Մուշեղ և Գայանե	Օգնություն- Mushegh & Gayane Avagyan	82000	$200
41	03.11.14	Բաբաջանյան Իշխան և Անահիտ	Օգնություն - Ishkhan & Anahit Babajanyan	123000	$300
42	03.11.14.	Բադալյան Սուրեն	Օգնություն- Sooren Badalian	82000	$200
43	03.11.14	Բաղդասարյան Ալեք և Ալենուշ	Օգնություն- Alec & Alenoush Baghdasarian	410000	$1000
44	03.11.14	Բալյան Արտաշես	Օգնություն – Artashes Balian	61500	$150
45	03.11.14	Բաղդանյան Համո	Օգնություն – Hamo Baghdanian	82000	$200
46	03.11.14	Բալյան Ռաֆֆի և Հարի	Օգնություն – Harri & Raffi Balian	410000	$1000
47	03.11.14	Բաշմակյան Հակոբ և Ալիսա	Օգնություն- Hakob & Alice Bashmakian	82000	$200
48	03.11.14	Բողոսյան Վիրջինյա	Գրքերի ծրագիր	14350	$35
49	03.11.14	Գուրգեն Մելիքյան	Օգնություն – G.Z. Anonym	61500	$150
50	03.11.14	Ղարախանյան Հայկ	Օգնություն –Haik Gharakhanian	82000	$200
51	03.11.14	Գյուրջյան Ռուբեն	Օգնություն – Gjurjian accounting services	82000	$200
52	03.11.14	Գրեգերի Վիկտոր	Օգնություն –Gregori Viktor	205000	$500
53	03.11.14	Կրխեյան Հակոբ	Օգնություն –Hakob Krkheyan	41000	$100
54	03.11.14	Հալաբի Անահիտ	Օգնություն և գրքերի ծրագիր-Halabi Anahit	61500	50+100=$150
55	03.11.14	Հայրապետյան Արմեն և էլեոնորա	Օգնություն- Armen & Eleonora Hayrapetian	205000	500
56	03.11.14	Հայրապետյան Հայկ և Թերեզա	Օգնություն –Haik & Teresa Hayrapetian	410000	$1000
57	03.11.14	Կալոգնոմոս Մեդեա և Ալեքսանդր	Օգնություն –Medea & Alexsander Kalognomos	205000	$500
58	03.11.14	Քանյան Նիք և Մերի	Օգնություն –Mary & Nick Kanian	410000	$1000
59	03.11.14	Խաչատուրյան Էդիկ և Ջուլիետա	Օգնություն և ծառերի ծրագիր Edik & Julietta Khachatourian ՝ ի փոխան ծաղկեպսակի Վահագն Մ. Հակոբյանցի հիշատակին	41000	$100
60	03.11.14	Դեր-Սահակյան Սյուզաննա	ԽԵԱ ծրագիր- Susanne Der-Sahakian	246000	$600
61	03.11.14	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր՝ Սուսաննա Քեխյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի (25.10.2014)	20000	
62	03.11.14	Մարգարյան Սարո և Աբուլյան Կարինե	Օգնություն և Հուշանվերներ- Saro Markarian & Karine Aboolian	235750	400+175=$575
63	03.11.14	Գրիգորյան Գարեգին	Օգնություն-ARPA Dental Laboratory	82000	$200
64	03.11.14	Վարդանյան Քրիստ	Օգնություն-American Heating Texnologies	1435000	$350
65	03.11.14	Առաքելի Ջորջ	Գրքերի ծրագիր	4100	$10
66	03.11.14	Ջոնի և Ծաղկուշ Արեֆ Ջուլֆայի	Օգնություն – Johnny & Tsakhkush Aref Julfai	61500	$150
67	03.11.14	Մելքոնյան Ռուբեն	Օգնություն՝ Ruben Melkonyan	80000	
68	06.11.14	Հայթայան Լևոն	ԽԵԱ ծրագիր և Գրքերի ծրագիր՝ Leon Haytayan	329600	700+100=$800
69	18.11.14	Խաչատրյան Արտուշ	Փոխատվական գումարի վերադարձ	200000	
70	19.11.14	Փաշայան Էդգար	Օգնություն –Edgar Pashayan	41000	$100
71	19.11.14	Ռամիրեզ Մաքս և էսթեր	Օգնություն –Max and Esther Ramirez	83800	$200
72	19.11.14	Սահակյան Մոնա	Օգնություն– Mona Sahakyan	125700	$300
73	19.11.14	Փիրջանյան Սուրեն	Օգնություն Souren Pirjanian (VSP Corporation)	209500	$500
74	19.11.14	Շահբազյան Գառնիկ, Լայլա, Շարիս	Օգնություն- Garnik, Layla, Sharis Shabazian	209500	$500
75	19.11.14	Սեթյան Վահագ	Օգնություն- Setian Charitable Fund	209500	$500
76	19.11.14	Պետրոսյան Ալեն	Օգնություն –Alen Petrossian	628500	$1500
77	19.11.14	Մաթևոսյան և Ալեքսանդրյան Արսեն և Իննա	Օգնություն-Հուշանվերների ծրագիր-Matevosyan & Aleksandrian Arsen & Inna	41599	$100
78	19.11.14	Կոջայան Մինաս	Օգնություն- Minas Kojayan	62398,5	$150
79	19.11.14	Մաթևոսյան Մաթեոս	Օգնություն –Mateos Matevosian	83198	$200
80	19.11.14	Պետրոսյան Գրիգոր	Օգնություն –Grigor Petrossian	103997,5	$250
81	19.11.14	Մարաշլյան Լևոն	Օգնություն –Levon Marashlian	124797	$300
82	19.11.14	Մարգարյան Ռուբեն և Վալենտինա	Օգնություն- Ruben & Valentine Margarian	207995	$500
83	19.11.14	Հովհաննեսյան Արկադի և Իրինա	Օգնություն- Arkadi & Irene Ovhannesian	415990	$1000
84	19.11.14	Կյուրեղյան Վարուժ և էմմա	Օգնություն –Varujh & Emma Kyureghian	831900	$2000
85	19.11.14	Խաչատուրյան Աիդա	Օգնություն և Ծառերի ծրագիր- Aida & Aram Khachaturian & Tchobanian	831900	1500+500=$2000
86	20.11.14	Եղյանց Սիրանուշ	Օգնություն –Siranush Yegiants	41637	$100
87	20.11.14	Եղյանց Արտաշես	Օգնություն –Artashes & Hasmik Yegiants	62455,5	$150
88	20.11.14	Եղյանց Մաթիլդա	Օգնություն –George & Matilda Yegiants	104092,5	$250
89	28.11.14	Եղյանց Աննա	Օգնություն- Anna, Tom & Suren Yegiants	43100	$100
90	20.11.14	Նազարյան Ալեն	Օգնություն –Allen Nazarian	41637	$100
91	20.11.14	Ներսիսյան Լիդուշ	Օգնություն –Leedoosh Nesisan	83274	$200
92	20.11.14	Սողոմոնյան Հարութ	Օգնություն –Harout & Lena Soghomonian	104092.5	$250
93	20.11.14	Վարդանյան Սուրեն	Օգնություն- Souren & Olga Vardanian	124911	$300
94	20.11.14	Սիմոնյան Ռիչարդ	Օգնություն- Richard Simonian	124911	$300
95	20.11.14	Մելիքյան Կարլի	Օգնություն- Karly Melikian	124911	$300
96	20.11.14	Թումանյան Ռաֆֆի	Օգնություն –Raffi & Astghik Toumanian	208185	$500
97	20.11.14	Նաջարյան Վարդգես	Օգնություն – Medical Outreach for Armenians Vardges & Mary Najarian	208165	$500
98	20.11.14	Ջանգոզյան Վարդան	Օգնություն և գրքերի ծրագիր՝ VJ & Associates	229003,5	500+50=$550

99	21.11.14	Արցախի Ազգային վիճակախաղ	Վաճառված տոմսերի դիմաց	320000	
100	25.11.14	Զարգարյան Վիգեն	Օգնություն և Հուշանվերներ Vigen Zargarian	438600	520+500=$1020
101	28.11.14	Շահբազյան Արամ	Օգնություն –Aram Shahbazian	64650	$150
102	28.11.14	Մանասյան Վլադիմիր	Ծառերի ծրագիր	48000	
103	28.11.14	Ավետիսյան Լևոն	Ծառերի ծրագիր	48000	
104	28.11.14	Գաբրիելյան Դերենիկ	Ծառերի ծրագիր	48000	
105	28.11.14	Պողոսյան Էդվարդ	Գրքերի ծրագիր- Edvard Poghosian	10975	$25
106	28.11.14	Մելքոնյան Ռուբեն	Օգնություն- Ruben Melkonyan	80000	

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 22 852735,8 ՀՀ դրամ

¶. Ø ºÈÆøÚ ²ÜÆª ø ² Þ ² Â ² ÔÆ ´ ²¼Ø ²¼ ² ì ² Î ÀÜî ²ÜÆøÜ ºðÆ ÐÆØÜ ² ¸ð ² ØÆ Î àÔØÆò
16.09.2014 – 01.12.2014 ÀÜÂ ² òøàôØ ìÖ ² ð ì ² Ì àôêØ ² Ü ì ² ðÒ ºð

h/h	Ազգանուն, անուն	գումարը ՀՀ դրամ	ուսումնական հաստատություն	վարձավճարի տեսակը՝ օգնություն ուս.ծրագիր	ամսաթիվ
1.	Շաշիկյան Գրիգոր	180 000	Երևանի պետհամալսարան հհ ՊՈԱ	Ստեփան Ալաջաջյան կ/թոշակ, հայ բան.ֆակ., մագ. 1-ին կուրս, դեկտեմբեր.-հունիս ամիսներ	16.09.14
2.	Սուջոյան Արմեն	60 000	Գորիսի պետական համալսարան	տնտեսագիտ. մագ, 1-ին կուրս	23.09.14
3.	Խաչատրյան Սամվել էդ.	160 000	Հայաստանի ագրարային համալ-սարան, Ստեփանակերտի մ/ճ	ագրոն. հեռ. 3-րդ կ., 2014/15 ու/տ վ.	30.09.14
4.	Սարիբեկյան Հրանտ	50 000	Հայաստանի պետական տնտեսա-գիտական համալսարան ՊՈԱԿ	հ/հաշվառ. աուդիտ, 4-րդ կուրս	30.09.14
5.	Այվազյան էդգար	60 000	Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտ	մարզաառողջարանական ֆ., 2-րդ կուրս	30.09.14
6.	Բարոյան Դավիթ էդ.	140 000	Երևանի ճարտ. պետ համալսարան ՊՈԱԿ	ճարտ-պետ. և դիզայն, 3-րդ կուրս	30.09.14
7	Ղարագյոզյան Տիգրանուհի Ա.	150 000	Երևանի Մ. Հերացու անվ. ՊԲՀ	ընդհ. բժշկ. ֆակ., 4-րդ կուրս	30.09.14
8	Մխիթարյան Հեղինե	200 000	Երևանի. Մ. Հերացու անվ. ՊԲՀ	օրթոդանտիա, կլինիկ օրդինատուրա	30.09.14
9	Շաշիկյան Գրիգոր	30 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	Ստ. Ալաջաջյան կ/թոշակ, Գր. Շաշիկյան, հայ բան. ֆ. մագիստր. 2-րդ կ., սեպտեմբեր ամսվա համար	02.10.14
10	Վարդանյան Տաթևիկ էդմոնդի	100 000	«Գրիգոր Նարեկացի»	հայոց լեզու և գրակ., հեռ. 3–րդ կուրս	31.10.14
11	Շաշիկյան Գրիգոր	30 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	Ստ. Ալաջաջյան կ/թոշակ, Գր. Շաշիկյան, հայ բան. ֆ. մագիստր. 2-րդ կ., սեպտեմբեր ամսվա համար	31.10.14
12	Հովհաննիսյան Արփի Հովիկի	50 000	Հայաստանի ազգային ագրար. համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ	ագր. արդյունաբերութ. էկոնոմիկա և կառա-վարում. մագ. հեռ. 2-րդ կուրս	03.11.14
13	Հարությունյան Լիլիթ Վահրամի	80 000	Հայաստանի ազգային ագրար. համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ	ագր. արդյունաբերութ. էկոնոմիկա և կառա-վարում. մագ. հեռ. 2-րդ կուրս	03.11.14
14	Հակոբջանյան Արաքսյա Ժոր.	80 000	Հայաստանի ազգային ագրար. համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ	ագր. արդյունաբերութ. էկոնոմիկա և կառա-վարում. 2-րդ կուրս	03.11.14
15	Ավետիսյան Հասմիկ Նվերի	80 000	Հայաստանի ազգային ագրար. համալսարանի Ստեփանակերտի	ագր. արդյունաբերութ. էկոնոմիկա և կառա-վարում. հեռակա 2-րդ կուրս	03.11.14
16	Այվազյան Թերեզա	48 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	հայ բանասիրութ. ֆակ. մագիստր. 2-րդ կուրս	03.11.14
17	Գալստյան Հերմինե	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ժուռնալիստիկայի ֆակ. 3-րդ կուրս	03.11.14
18	Ավագյան էրիկ Արթուրի	50 000	Արցախի պետական համալսարան	տնտ.իրավ. ֆակ., հաշվ. հաշվառում, հեռ. 5-րդ կուրս	03.11.14
19	Աղասյան Դավիթ	60 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱ	տնտեսագիտ. ֆակ. հեռակա 3–րդ կուրս	03.11.14
20	Սարգսյան Շուշանիկ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբիոն, մագ.2-րդ կուրս	03.11.14
21	Ավետիսյան Սյուզաննա	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբիոն, մագ.2-րդ կուրս	03.11.14
22	Մալխասյան Սյուզաննա	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբ. մագ.2-րդ կուրս	03.11.14
23	Մկրտչյան Հակոբ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ինֆ. և կիրառ. մաթեմ. ֆակ., 2-րդ կուրս	03.11.14
24	Ալեքսանյան Աննա	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևելագիտ. ֆակ.,իրանագիտ. 2-րդ կուրս	03.11.14
25	Հակոբյան Նատալյա	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ռոմանագերմ. բանասիր ֆակ., 2-րդ կուրս	03.11.14
26	Մինասյան Վահե	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ֆիզիկայի ֆակ., .մագիստրր, 2-րդ կուրս	03.11.14
27	Աբգարյան Տաթևիկ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ինֆ. և կիրառ. մաթեմ. ֆակ., 2-րդ կուրս	03.11.14
28	Մկրտչյան Տաթևիկ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ինֆ. և կիրառ. մաթեմ. ֆակ., 2-րդ կուրս	03.11.14

29	Խաչատրյան Թամար	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ինֆ. և կիրառ. մաթեմ. ֆակ., 2-րդ կուրս	03.11.14
30	Մաթևոսյան Արա	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ինֆ. և կիրառական մաթեմ. ֆակ., 3-րդ կուրս	03.11.14
31	Մահմուդյան Խանե	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևել. ֆակ., իրանագիտ. 4–րդ կուրս	03.11.14
32	Բալասանյան Արթուր	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	մեխանիկայի և մաթեմ. ֆակ., . 4–րդ կուրս	03.11.14
33	Հովհաննիսյան Անահիտ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբ., մագիստր. 2-րդ կուրս	03.11.14
34	Համազասպյան Լուսինե	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբ., մագ.2-րդ կուրս	03.11.14
35	Սողոմոնյան Պարույր	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբ., մագ.2-րդ կուրս	03.11.14
36	Մկրտչյան Նարե	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբ., մագ.2-րդ կուրս	03.11.14
37	Սարուխանյան Տաթևիկ	80 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սփյուռքագիտ. ամբիոն, մագիստր. 2-րդ կուրս	03.11.14
38	Թամրազյան Մարիամ	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	հայ բանասիրության ֆակ., 2-րդ կուրս	03.11.14
39	Ավագյան Էլեն	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	հայ բանասիրության ֆակ., հեռակա 2-րդ կուրս	03.11.14
40	Ասատրյան Անի	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	հայ բան. ֆակ. ,հայ.լ. պատմ. ամբ.	03.11.14
41	Մխոյան Լիլիթ	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	միջազգ.հարաբեր. ֆակ., 3-րդ կուրս	03.11.14
42	Բաբայան Շողեր	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	միջազգ. հարաբեր. ֆակ., հեռ. 3-րդ կուրս	03.11.14
43	Երանոսյան Անի	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	տնտեսագիտ. ֆակ. , հեռ. 5-րդ կուրս	03.11.14
44	Երանոսյան Լիլիթ	100 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	տնտեսագիտ. ֆակ. , հեռ. 5-րդ կուրս	03.11.14
45	Մկրտչյան Ժերմինա Հովի.	120 000	Գյումրու մանկավարժ ինստիտուտ	պատմ. ֆակ. , հեռ. 2-րդ կուրս	03.11.14
46	Այվազյան Էլեն	120 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևելագիտ. ֆակ., արաբ. 3-րդ կուրս	03.11.14
47	Համբարձումյան Անի	150 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ռոմանագերմ. բանասիր. ֆակ.. 2-րդ կուրս	03.11.14
48	Գևորգյան Մարիամ	150 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևելագիտ. ֆակ.թուրքագիտ. 2-րդ կուրս	03.11.14
49	Զաքարյան Մարալ	160 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ժուռնալիստ. ֆակ., 2-րդ կուրս (սիրիահայ)	03.11.14
50	Յուխանովա Լուիզա	160 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	ռոմանագերմ. բան. ֆակ., մագիստ.2-րդ կուրս	03.11.14
51	Գասպարյան Անահիտ	160 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սոցիոլոգ. ֆակ.,մագիստրատուրա 2-րդ կուրս	03.11.14
52	Եղիկյան Նոյեմի	160 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	պատմության ֆակ, հեռակա 3-րդ կուրս	03.11.14
53	Խաչատրյան Կրիստինա Մխ.	160 000	Արցախի պետական համալսարան	բան.ֆակ.,անգլ. լեզու և գրակ., 2-րդ կուրս	03.11.14
54	Կիրակոսյան Օֆելյա	200 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	իրավագիտ ֆակ., մագիստր 2-րդ կուրս	03.11.14
55	Խաչատրյան Արմինե	225 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	երկրաբ.և աշխ. ֆակ., մագիստր 2-րդ կուրս	03.11.14
56	Տերտերյան Անժել	225 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևել. ֆակ., արաբ.,2-րդ կուրս(սիրիահայ)	03.11.14
57	Մադոյան Սիրանույշ	275 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	արևել.ֆակ., արաբ., 2-րդ կուրս	03.11.14
58	Բունիաթյան Ջոան Արթուրի	190 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	միջ. հարաբ. ֆ., քաղաքագիտ. 2-րդ կուրս	03.11.14
59	Գևորգյան Ալվարդ	125 000	«Գրիգոր Նարեկացի» համալսարան	տարրական մանկավարժ. մեթոդիկա, մագ. 1-ին կուրս	03.11.14
60	Հայրապետյան Անահիտ	40 000	Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	սոցիոլ. ֆակ., սոց. աշխ. 2-րդ կուրս	03.11.14
61	Այվազյան Վազգեն	40 000	ՀՀ ագրարային համալսարան հիմնադրամի Ստեփանակերտի մ/ճյուղ	անասնաբուժ.սանիտար.փորձաքնն. հեռ. 3-րդ կուրս	03.11.14
62	Շաշիկյան Գրիգոր		Երևանի պետհամալսարան ՊՈԱԿ	Ստեփան Ալաջաջյան կ/թոշակ, հայ բանասիրական ֆակ., մագ. 1-ին կ, նոյեմբերի համար	03.11.14

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 6 533 000 ՀՀ դրամ

Խոսք շնորհակալության

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ստեփանակերտ, Թումանյան փող.4824 դեկտեմբերի 2014 թ.
N 01- 2078

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն
պարոն Գ. Մելիքյանին

Հարգարժան պարոն Մելիքյան.

Արցախի ուսուցչական հանրույթի եւ անձամբ իմ անունից երախտագիտություն եմ հայտնում Ձեզ ուսուցչի օրվա առթիվ ՀՀ պարի պետական անսամբլի այցը Արցախ կազմակերպելու կապակցությամբ ուսուցչությանը հերթական անակնկալը մատուցելու համար: Տոնակատարությանը առանձին շուք ու փայլ հաղորդեց անսամբլի ելույթը, որը մասնագիտական եւ մշակութային ընդգծված արհեստավարժությամբ գեղագիտական մեծ բավականություն պատճառեց հանդիսատեսին: Ձեր այս-օրինակ ուշադրությունն ու պատրաստակամությունը, հիրավի, ազգանվեր է, որում ամփոփված են կրթության եւ գիտության լույսի նկատմամբ արտահայտված Ձեր կենսական ակտիվ դիրքորոշումը: Դուք միշտ էլ առանձնակի ուշադրություն եք հանդես բերել կրթության ոլորտի, նրա առաջընթացների, բարեփոխումների ու առկա խնդիրների նկատմամբ:

Ձեր ազգանվեր գործունեությունը, որը Դուք ցուցաբերում եք հիմնադրամի ծրագրերի շրջանակներում, թող հետայսու եւս պակվի հաջողությամբ:

Արգասաբեր գործունեություն Ձեզ եւ բոլոր մեծ ու փոքր ծրագրերի, մտահղացումների իրականացում:

(ստորագրություն) Ս. ԱՍՐՅԱՆ

Ուսանողի երախտագիտությունը

Ես Գրիգոր Շաշիկյանն եմ: Այժմ գերազանցությամբ սովորում եմ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսում: Ուսումնառությանս առաջին իսկ օրերից, բնականաբար, գրականությունը դարձել է իմ ամենօրյա ուղեկիցը, անանց սերն ու ինքնաարտահայտման կերպը: Այդ ճանապարհին, հանդիպումը Ստեփան Ալաջաջյանի հետ որքան հաճելի, նույնքան էլ պարտավորեցնող էր: Հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի և ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ 2012թ. արժանացա Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակի: Անվանական այդ կրթաթոշակը ցանկացած ուսանողի համար մեծ պատիվ է ու մանավանդ պատասխանատվություն, քանի որ նշանակում է ոչ միայն լավ իմանալ Ալաջաջյանի գրական ու մարդկային նկարագիրը, այլև հավատարիմ լինել նրա գրական հավատամքին. երբեք և ոչ մի պարագայում չընկճվել, գրիչը վայր չդնել, եթե քո ընթերցողը սպասում է քեզ: Ինձ ու իմ սերնդակիցներին բախտ չի վիճակվել տեսնելու Ստեփան Ալաջաջյանին և անձնական շփում ունենալու նրա հետ: Բայց մենք հարազատ ենք այնքանով, որ նա թեև գրական առաջին քայլերը կատարել էր արտասահմանում, և երբ մեր տարիքին էր ու սովորում էր մեր ֆակուլտետում, արդեն համբավավոր գրող էր:

Իսկ հիմա նա մեզ հետ շարունակում է խոսել իր ստեղծագործություններով, մեզ սովորեցնում է գրողի, քաղաքացու, հայի իր կենսաձևը ու ամենակարևորը, որ սովորեցնում է նա չխոնարհվող եղեգների նման կանգուն մնալու հայրենասիրության և հավերժվելու դասը:

Ստ.Ալաջաջյանը համոզված էր, որ իր երկերը, գեղարվեստականի հետ միասին, ունեն ճանաչողական մեծ արժեք, երբ գրում էր."Նոր սերունդը իր ներկայի մեջ, ավագների անցյալն իմանալով, կձգտի սեր վերցնել նրանից":

Երիտասարդ գրողիս համար ոչ պակաս կարևոր մի հանգամանք ևս. Ստ. Ալաջաջյանը իր գրական քայլերն սկսել է բանաստեղծություններով, այնուհետև անցել արձա-կի: Ես, որ հաստատակամորեն գրական անդաստաններն եմ ընտրել որպես իմ անցնելիք ուղի,և արձակն է դարձել իմ ինքնաարտահայտման ձևը, գրական թոթովանքներս դարձ-յալ բանաստեղծական լեզվով եմ արել:

Գրողի անվան կրթաթոշակը ուսանողիս համար ոչ միայն նյութական, այլև հոգևոր մեծ աջակցություն է, որն արժանի է միայն շնորհակալության և անվանի գրողի հե-տ-նորդը լինելու զգացողությունը պատվով կրելու:

Խորին հարգանքներով Գրիգոր ՇԱՇԻԿՅԱՆ (ԳՐԻԳ)

28.10.2014

ԵՐԵՎԱՆ

ՎՈՒԴԲՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԼՈՐԻ ԲՈՂԻԳՅԱՆԻ ԵՎ ԹԱԼԻՆ ՖԱԽՈՒՐՅԱՆԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ԴՈԿՏՈՐ ՆԱԶԵԼԻ ՉԱՐՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՈՎ

Առաջին երկու պարգևատրվողները, ում անուններն ընդգրկված են «Մարդասիրական ժառանգություն» հիմնադրամի ծրագրում

Բուրբանկ, Կալիֆորնիա (հոկտեմբեր 7, 2014) Վուդբրի համալսարանն այսօր հայտարարեց, որ համալսարանի ուսանողներ Լորի Բողիգյանը և Թալին Ֆախուրյանը առաջիններն են, որ արժանացել են դոկտոր Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի պարգևին: Միջգիտակարգային ուսումնասիրություններում մասնագիտացող կրտսեր ուսանող օրիորդ Բողիգյանը և հաշվապահության մեջ մասնագիտացող բարձր կուրսի ուսանող օրիորդ Ֆարուխյանը՝ երկուսն էլ կստանան 2500 - ական դոլլար արժողությամբ կրթաթոշակը:

Կրթաթոշակային այս հիմնադրամը ստեղծվել է Չարչյան ընտանիքի կողմից ի հիշատակ հարգարժան բժիշկ և նվիրյալ հայաստանասեր ու մարդասեր դոկտոր Նազելի Չարչյանի՝ վերջինիս մահվանից հետո և միտված է կրթության միջոցով կանանց որոշակի իրավասություններով օժտելու: Կրթաթոշակները նպատակաուղղված են ներկայիս ուսանողներին, նաև նրանց, ովքեր ձգտում են Գլենդելի համայնքային քոլեջից անցում կատարել և գրանցվել Վուդբրի համալսարանում: Կրթաթոշակ ստացող ուսանողները պետք է իգական սեռի ներկայացուցիչ լինեն, ովքեր տոգորված են մարդասիրական գաղափարներով և նվիրված են մարդկության բարօրությանը խթանելու գործին:

– Համալսարանի անունից մենք շնորհավորում ենք Լորիին և Թալինին այս առանձնահատուկ պատվին արժանանալու առիթով,–ասաց Վուդբրի համալսարանի պրեզիդենտ դոկտոր Լուիս Մարիա Ռ. Քալինգոն:– Կրթաթոշակները վկայում են նրանց անհատական նվաճումները և հաստատում նրանց ոգևորությունը:

– Դոկտոր Չարչյանն իր կյանքը նվիրաբերել է այլոց օգնելուն, և մենք հպարտ ենք, որ նրա ժառանգությունը կարող է այսպիսի ոգևորություն ծնել, – ասում է դոկտորի որդին՝ Արթուր Չարչյանը: – Այս կրթաթոշակը միջոց է, որով մեր ընտանիքը կուզենար զորացնել կանանց մի նոր սերունդ և նրանց դարձնել մարդասիրության ջատագովներ: Մարդասիրությունը ներկայումս վտանգավոր փոփոխությունների շեմին է : Նրա առանցքում ոչ միայն նախանշաններն են, այլև արմատական պատճառներ: Մարդիկ, ովքեր նպատակասլաց են մարդասիրության հարցում, երբեք չեն խոչընդոտի բարեփոխումները և կդառնան հասարակության այն միջուկը, որը կնպաստի առաջընթացին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՒԴԲՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հիմնադրվելէ 1884 թ. և Հարավային Կալիֆորնիայի հնագույն բարձրագույն հաստատություններից է: Այն շրջանավարտներին բակալավրի աստիճաններ է շնորհում ճարտարապետության, բիզնեսի, լրագրության, մշակույթի դիզայնի և միջգիտակարգային ոլորտներում, մագիստրոսական աստիճան՝լրատվամիջոցների դերը սոցիալական արդարության ոլորտում, ճարտարապետության և այլ մասնագիտությունների գծով:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մարտակերտի N զորամասում փետրվարի 1-ին գեղարվեստական արտակարգ միջոցառում էր՝ համերգ զինվորների համար: Ռազմական ոստիկանության պետի տեղակալ մայոր Արտաշես Հարությունյանի հրավերով, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի», ինչպես և Երկրապահ կամավորականների միության աջակցությամբ Մարտակերտի զորամաս էր այցելել հայ երգի այսօրվա լավագույն կատարողների մի խումբ:

Թեժ օրեր են Արցախում. նենգաբարո և դրուժան թշնամին հրադադարի կոպիտ խախտումներով անընդհատ շիկացնում է սահմանային լարվածությունը, որ հայ զինվորից պահանջում է առավելագույն զգոնություն, երբեմն էլ նույնիսկ ամենաթանկը՝ կյանքը: Բայց սահմանին անվեհեր կանգնած տղերքը, որ թշնամուն խաղաղություն են պարտադրում, միս ու արյունից կազմված մարդիկ են, կյանքի սիրահարներ՝ իրենց երազներով, սիրով ու հարազատների կարոտով, գեղագիտական պահանջներով:

Նրանք սպասում էին վաստակավոր արտիստներ Մկրտիչ Մկրտչյանին, Լեյլա Սարիբեկյանին, Արսեն Գրիգորյան-Մրոյին ու Դավիթ Ամալյանին:

Կամերային պետական թատրոնի դերասան Մխիթար Ավետիսյանը հմտորեն վարում էր համերգը, որը մեծ բավականությամբ ըմբոշխնում էին հայ զինվորները:

Համերգը ցույց տվեց, որ ճշմարիտ արվեստագետները երգի վաճառականներ չեն և միշտ ժողովրդի ու հայրենիքի պաշտպանների կողքին են: Զինվորի առջև պարտքի զգացումն իրոք պարտավորեցնող է, և այդ օրը երգերը հնչում էին առավել սրտաբուխ ու կատարյալ՝ անմոռաց վայելք պարգևելով հայրենիքի

քաջարի պաշտպաններին: Արսեն Գրիգորյան-Մրոն՝ ժողովրդագուսանական ու ազգագրական երգերի իր անզուգական կատարումներով, Լեյլա Սարիբեկյանն ու Դավիթ Ամալյանը՝ ժամանակակից հայ երգահանների գործերի սքանչելի ներկայացումներով, Մկրտիչ Մկրտչյանը Կոմիտասով ու ժողովրդական երգերի իր մեկնություններով մի պահ մոռացնել տվեցին թշնամի ու պատերազմ, դիրք ու ինքնաձիգ: Այնքան էր համերգը ինքնաբուխ ու ոգևորիչ, և ճշմարիտ արվեստի հանդեպ հիացումն այնքան ինքնամոռաց, որ արտիստների հետ սկսեցին երգել «հին» զինվորներն ու նորակոչիկները, և Մարտակերտում համերգը վերածվեց կատարյալ տոնախմբության, որը կրկնվելու է պարբերաբար: Ուրեմն՝ արտիստները հաճախ են մեկնելու զորամասեր՝ քաջալերելու մեր զավակներին՝ հայրենյաց խիզախ պաշտպաններին:

Կարող ենք երևակայել, թե ինչպիսին կլինի համաժողովրդական ցնծությունը պատերազմի վտանգը չեզոքացնելու, ողջ տարածաշրջանում իրական խաղաղություն հաստատելու և մեր հաղթանակը կատարյալ ու լիարժեք վավերացնելու բաղձալի օրը:

Նախապատրաստվում ենք այդ օրվան՝ չմոռանալով պատերազմի վտանգը, ճանաչելով մեր խարդախ թշնամուն և հիշելով մեր թանկ կորուստներն ու զոհերին:

Երևանից ժամանած երգիչներին շնորհակալություն հայտնեց Մարտակերտի շրջիվանդանոցի բժշկուհի Միլետա Հովհաննիսյանը: Նա զինվորներին քաղցրավենիքներ բաժանեց և ասաց շնորհակալիքի իր սրտաբուխ խոսքը գեղեցիկ, անկրկնելի օրվա ու գեղագիտական վայելքի համար, որ պարգևեցին սիրելի երգիչները.

- Շնորհակալությո՜ւն, սիրելի՛ երգիչներ: Մարտակերտը միշտ էլ սիրով ու ծափողջույններով կընդունի ձեզ՝ Լեյլա Սարիբեկյան, Արսեն Գրիգորյան, Մկրտիչ Մկրտչյան և Դավիթ Ամալյան:

Բարի՜ ճանապարհ և վերադարձ բարի:

Հայտարարություն

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հայտարարում է մեծ մարդասեր, անվանի բժիշկ, Լոս Անջելեսի հայ համայնքային կյանքի կազմակերպիչ, հայասեր ու հայաստանասեր

ՆԱԶԵԼԻ ՉԱՐՉՅԱՆԻ

անվան ուսանողական կրթաթոշակ: Շոշափելի գումար ներկայացնող այդ կրթաթոշակը սահմանվում է թե՛ հանգուցյալ Չարչյանի հիշատակը հավերժացնելու և թե՛ ուսանող երիտասարդությանը համամարդկային վեհ գաղափարներով ու ձգտումներով տոգորելու, ինչպես նաև նրան խրախուսելու, ուսման պայմանները բարելավելու նպատակով: Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հոգաբարձության խորհրդին դիմում են ներկայացնում հիմնադրամի գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանի անունով: Դիմումներն ընդունվում են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի սենյակում մինչև ս/թ մարտի 10-ը:

Հայտնում ենք մեր հիմնադրամի բարեգործներին ու համակիրներին, “Բարեգործ” պաշտոնաթերթի բոլոր ընթերցողներին, որ “Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը” Արցախի Բերձոր քաղաքում՝ հայտարարում է

Ì ² è ² î à ô Ü Î

նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին եւ միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակին:

Ամեն ընտանիք կարող է ծառ տնկել նաեւ իր հանգուցյալների հիշատակին, ինչպես նաեւ՝պսակադրության, զավակների կամ թոռների ծննդի, նրանց, արեւշատության, մկրտության, տարեդարձի եւ այլ հիշարժան դեպքերի առիթներով:

Ծառատունկ կարելի է կատարել, բացի ձմռանը, ամեն տարվա մարտից մինչեւ նոյեմբեր ամիսներին: Դա հնարավոր է նաեւ ամռանը, քանի որ արմատակալ ծառերը նախապես դրված են թիթեղյա թաղարների մեջ եւ հողով կարող են տեղադրվել նախատեսված պուրակում կամ վայրում:

Ծառերի էտումը, բուժումը, ջրելը, խնամքը եւ պահպանությունը վստահված է Բերձորում բնակվող հմուտ այգեպանների:

Յուրաքանչյուր ծառի արժեքն է 100 դոլար կամ դրան համարժեք եվրո:

Ցանկացողները կարող են գումարը փոխանցել ստորեւ նշված հաշվեհամարին՝ նշելով ծառի անվանատիրոջ լրիվ անունը, ազգանունը, հայրանունը եւ ծննդյան տարեթիվը:

FOR **EURO** TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730010**
BENEFICIARY’S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH**

	SWIFT Code: ASHBAM22
ADDRESS:	**13 G.LUSAVORICH Str., Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**CORR.ACCOUT: 100-947721700 Deutsche BANK AG, Frankfurt am Main SWIFT Code: DEUTDEFF**
TRANFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

FOR **USD** TRANSFERS

BENEFICIARY	**GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH**
TAX IDENTIFICATION NUMBER	**01533651**
ACCOUNT NUMBER	**2473800074730001**
BENEFICIARY'S BANK:	**ARDSHINBANK KASHATAGH BRANCH , ARMENIA SWIFT Code: ASHBAM22**
ADDRESS:	**13 G.LUSAVORICH st., Yerevan, ARMENIA**
INTERMEDIARY BANK:	**Deutsche Bank Trust Company Americas** 60 Wall Street, New York, NY 10005 BKTRUS33
TRANSFER DETAILS	**ASSISTANCE TO COW, TREE, STUDENT, BOOK PROGRAM**

Գումարի փոխանցման դեպքում խնդրում ենք տեղյակ պահել հետեւյալ հասցեով՝
Republic of Armenia, Yerevan,16 Mkhitar Heratsi st., apt. 48, G. MELIKYAN
Tel. (37410) 57-60-73

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
ԱՎԱԳՅԱՆ Ա, բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ, բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ, պ. գ. թ., պրոֆեսոր
Համարի նյութերը, շարվածքը և ձևավորումը՝
Ս.Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան-0025 Աբովյան 52ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:
Հեռ.՝ 060 – 710- 62 - 90, 055 -52- 29-36, 55-25-37: